

Հայտարարություն

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը հայտարարում է 2024-2025 ուսումնական տարվա պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով՝

- Գ.00.03 «Մոլեկուլյար և բջջային կենսաբանություն»՝ 1 տեղ
- Գ.00.04 «Կենսաքիմիա»՝ 1 տեղ

Մրցույթին կարող է մասնակցել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի շրջանավարտ կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող բժիշկ-մասնագետը:

Քննությունները մասնագիտական առարկաներից կազմակերպվելու են հունիսի 25-ից մինչև հուլիսի 04-ը:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ն, մինչև հունիսի 20-ը ներառյալ, ք. Երևան, Կորյունի փողոց 2, ԵՊԲՀ Գիտության վարչություն: